№ 170 ԿԻՐԱԿԻ 4 ՕԳՈՍՏՈՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 4 ՕԳՈՍՏՈՍԻ № 170

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) -20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում Морская, 11, Վարշավայում Маршальковская, 130, Վիլնոյում Большая 38 Պարիզում 8 Площадь Биржи.

1913 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 Թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ II ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

սրանով յայտարարում է, որ վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ից, իսկ ընդունելութեան քննութիւնները պատրաստական (ստորին և բարձր), 1, 2, 3, 4, 5 և 6-րդ դասար. մտնելու համար—օգոստ. 28-ից։ VII և VIII դասար. ընդունելութիւն չի լինի։ Մաղթանքը կիրակի, սեպտ. 1-ին, առաւ. ժամ 11-ին, Պանասեվիչա փող., 38, տէլէֆօն № 3—10։

(կ.) առ. 607. 2—2

Ս. ԵՍԱՅԵԱՆԻ

Ընտանիքում ընդունվում են գիշերօթիկ աշակերտներ մինչև 15 տարեկան հասակը։ Կարելի է դասերի կրկնողութեամբ։ Բնակարանի հասցէն՝ Չերքէզովսկայա փող. տ. № 3, Վորոնցովի արձանին մօտիկ։ Դիմել պայմանների մասին ամեն օր «Մշակի» խմբագրատուն առ. ժ. 10—2։

(կ. ե.) առ. 606. 3—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

357. 50—27 (հ. կ.)

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
գունատիպ

Լոյս տեսած Վիեննայի Գաուֆիլէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Թիֆլիսում. մեծաքանակ—Մանթաշեանցի խանութում (Մադաթեան կղզի), իսկ հատով—«Բլան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։

Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%։

(հ.կ.) առ. 423. 25—21

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն стаціонаръ հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), փոքր գինով պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական խանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, փոքր գինով պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցայտլինեան, Ն. Ն. Վասիլովզորով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Ջ. Ռամիկեան, Ա. Ր. Ֆիշէր, Ս. Գ. Շահպարոնեանց։ Կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբոտին։

(հ.կ.) առ. 779. 160—77

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոզների կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.

(կ.) առ. 830. 0—34

ԲԺԻՇԿ
ՑՈՒՑԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։ Հասցէն՝ Ռտիշչեվսկայա № 1.

առ. (հ.հ.կ.) 4. 100—84

ՊԱՀԱՆՋԻ ԴԻՄԱՑ

Այս տարի ճանապարհորդներ շատ եղան մեր երկրում։

Եկան գիտութեան զանազան ճիւղերին նուիրված անձեր և այցելեցին մեր երկրի հետաքրքրական մասերը։

Կային նրանց մէջ բուսաբաններ, հանքաբաններ, հնագէտներ, ազգագրագէտներ, գիւղատնտեսներ։

Ներկայումս Կովկասումն են գտնվում ֆրանսիական ճանապարհորդներ Թոմա և Մեսլ, որոնք մտադիր են վերելք կատարել Արարատի վրա։ Մի ուրիշ խումբ պատրաստվում է բարձրանալ Էլբրուսի վրա։ Մի երրորդ խումբ (որի մէջն են հոլլանդական երկրաբան Վանդեր Բլիգ, իտալացի Գրիոնի և ուրիշներ), վերելք կատարեց Կազբէկի վրա։ Մի քանի բուսաբաններ լեռնային շրջաններում կազմում են բուսաբանական հաւաքածուներ։

Աշնան ամիսներին դարձեալ գալու են մի քանի անձեր։ Օրինակ՝ Գերմանիայից գալու է պրոֆեսոր Աուխագէն իր ընկերների հետ միասին ուսումնասիրութեան ընդարձակ ծրագրով։ Պետերբուրգից գալու է Վիններ՝ փորձնական կայարանների խնդիրները ուսումնասիրելու և այլն։

Այն ճանապարհորդները, որոնց հետ մենք առիթ ենք ունեցել զրոյցներ անելու, հիացմունք յայտնելով մեր երկրի անբաւ հետաքրքրութեան մասին, գանգատվում են, որ չը կան այնպիսի աշխատութիւններ, որոնք դիւրացնէին ճանապարհորդների աշխատանքները։

Մի երկու ուղեցոյց, որոնք հրատարակված են, ճիշդ է, հասցնում են մի փոքր օգնութիւն, բայց նրանք շատ անկատար և թերի են մասնագիտական հետաքրքրութիւն ունեցողների համար։

Կովկասցիները և մանաւորապէս հայերը պէտք է ուշադրութիւն դարձնեն այդ հանգամանքի վրա և իրանց կողմից միջոցներ ձեռք առնեն դիւրացնելու մեր երկրի ուսումնասիրողների գործը։

Եւրոպական ճանապարհորդների այցելութիւնները մինչև այժմ օգտաւէտ են եղել մեր երկրի համար և այսուհետև էլ նրանց դիտողութիւնները արգիւնաւէտ կը լինեն մեզ համար։

Աչքի առաջ ունենալով, որ մասնաւոր նախաձեռնութիւնը մինչև այժմ չէ ձեռնարկել մի լուրջ աշխատութեան մեր առաջ բերած նպատակին ծառայելու, խնդիր է ասպարէզ գալիս, թէ արդեօք չէ՞ր կազմվի այդ գործով հետաքրքրվողների մի խումբ, որը գրավեր լիակատար նկարագիրներ կազմելով երկրի այս ու այն մասի վերաբերութեամբ և կամ արդեօք մեր հիմնարկութիւններից որևէ մէկը—օրինակ՝ Հրատարակչական Ընկերութիւնը—չէ՞ր կարող ձեռնամուխ լինել մի այդպիսի գործի։

Մենք աչքի առաջ ունենք, որ այդ աշխատութիւնը լինէր ոչ մակերևոյթային մի ուղեցոյց, այլ գոհացնէր և աւելի մեծ բանասիրութեան պահանջներ, տալով նաև ցուցումներ արված երկասիրութիւնների մասին։

Այդպիսի աշխատութիւնը պէտք է հրատարակվի թէ հայերէն և թէ եւրոպական լեզուներով։

Նա օգտաւէտ կը լինի թէ օտարների համար, որոնք գալիս են մեր երկիր, և թէ հայերի համար, որոնք ընդհանուր առմամբ լաւ չեն ճանաչում իրանց իրականութիւնը և իրանց երկրի անցեալը։

Ճանապարհորդութիւններ, գիտնական արշաւանքներ, մանկավարժական զբօսանքներ և ամեն տեսակ շրջագայութիւններ կատարելը տարէցտարի աւելանում է և բարդ ձևեր ստանում։

Եւ անհրաժեշտ է բազմաթիւ հետաքրքրվող անձերի և խմբերին աջակից լինել մի այնպիսի համակրելի գործում, ինչպէս է մեր երկրի հետ ծանօթանալը և նրան ուսումնասիրելը։

Ա. Քալանթար

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 օգոստոսի

Կ. Պոլիս.—Թիւրքական համալսարանի 500 ուսանողներ գնացին Ադրիանուպոլիս։

Թիւրքական հեծախոյզ զօրամասը գերի վերցրեց Ադրիանուպոլսի շրջակայքում բուլղարական մի զօրախումբ 80 հոգուց բաղկացած։ Բուլղարական 3 օֆիցէր, որոնց մէկը գլխաւոր շտաբից, կալանաւորված են Ադրիանուպոլսում։

—

Կ. Պոլիս.—Կոմիտէտական «Թասվիրը-Էֆքեար» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքիան պատերազմ կը յայտարարի Բուլղարիային՝ Թիւրք գերիներին կոտորելու առիթով։ Այդ սենսացիոն լուրը կառավարութեան կարծիքը չէ արտայայտում, այլ մի քանի շովինիստ շրջանների, որոնք կարծում են, թէ Թիւրքիան մի համարձակ հարուածով կարող է օգտագործել անորոշ դրութիւնը Եւրոպայում։

—

Վիեննա.—Մակեդոնական կոմիտէտի պարագլուխ Գէորգովը ասել է «Րէյխսպոստի» աշխատակցին, որ մակեդոնական բուլղարները կռիւ են մղելու սերբերի և յոյների ծանր լուծի դէմ։ Միակ ելքը երկրի մէջ հանգստութիւն և կարգ ապահովելու համար ինքնավար Մակեդոնիա ստեղծելն է. հակառակ դէպքում խաղաղութիւնը չի վերականգնվի և անկարգութիւնները Մակեդոնիայում տեական կը դառնան։

—

Սօֆիա.—Հայկական գաղութը բողոք հրատարակեց բուլղարական ազգի դէմ սիստեմատիքաբար տարածվող զրպարտութիւնների առիթով։

—

Բուխարէստ.—Ֆրանց-Յովսէփ կայսրը շնորհաւորական հեռագիրներ փոխանակեց Կարլոս Թագաւորի հետ։

—

Վիէննա.—Լրագիրների ասելով մակեդոնական պատգամաւորութիւնը եկել է խնդրելու ազդեցիկ շրջաններին՝ մակեդոնացիներին պաշտպանելու և օգնելու համար։

—

Լօնդօն.—Պարլամենտը փակելիս Թագաւորը հետևեալ գահական ճառը արտասանեց. «Բալկանեան պատերազմին մասնակցող պետութիւնների պատգամաւորների կոնֆերէնցիան սկսեց իր նիստերը Լօնդօնում գարնանը և աշխատութեամբ աւարտեց խաղաղութեան դաշնագրով։ Այնուամենայնիւ ինձ խորապէս վիրաւորում է այն, որ առանձին ազգութիւնների թշնամութիւնը նոր պատերազմ առաջ բերեց մի շարք տխուր միջադէպերով։ Հաճելի է արձանագրել, որ Բուխարեստի կոնֆերէնցիան վերջ տուեց պատերազմական գործողութիւններին։ Ես յոյս ունեմ, որ խաղաղութիւնը հաստատուն կը լինի։ Խորին գոհունակութիւն եմ զգում, որ մեծ պետութիւնները մըշտապէս իրար հետ շփման մէջ էին և որ իմ կառավարութիւնը արեց բոլորը, ինչ որ հնարաւոր էր դիւրացնելու մտքերի փոխանակութիւնը և միաբան գործողութիւնները Լօնդօնում եղած դեսպանների միջոցով»։

—

Աթէնք.—Մեծ պատրաստութիւններ են տեսնվում Թագաւորին ընդունելու։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 օգոստոսի

Պետերբուրգ.—Գաղթականական վարչութիւնը 1914 թւին գաղթականներին տնային գոյքեր ձեռք բերելու համար նպաստ տալու նպատակով խնդրում է գանձարանից 9.000,000 ռուբլի։

—

Մուկդէն—Խոտունջույում բանակ դըրած խառը բրիգադայի առաջին բատալիոնը ապստամբել է շնորհիւ այն հանգամանքի, որ օֆիցէրները նրանցից պահանջում էին խիստ կարգապահութիւն։ Օֆիցէրները սպանված են։ Զինւորները դարձել են խունխուզներ։

—

Րիգա.—Գործադուլարար բանւորների թիւը նաւահանգստում հասնում է 5000-ի։

—

Կահիրէ.—Համաձայնութիւն է կայացել եգիպտական և իտալական կառավարութիւնների միջև Եգիպտոսի և Տրիպոլիսի սահմանները որոշելու հարցում։

—

Լօնդօն.—Պարլամենտը արձակվում է մինչև հոկտեմբերի 20-ը։ Անկարգութիւնները Դերբիյում շարունակվում են։ Քաղաքագլխի խնդրանքով մի բատալիոն զօրք է եկել քաղաք։

—

Խարբին.—Խէյլուդզիանի և Խինգանի գաւառների սահմանի վրա երևացել է 400 խունխուզներից բաղկացած աւազակախումբ, որը անպատիժ կերպով կողոպտում է ազգաբնակութեանը։

Լօնդօն.—Բէլգրադի անգլիական դեսպան Րալֆ Պեջեթը նշանակված է արտաքին գործերի ստատս-սեկրետարի օգնական Մալէտի փոխարէն, որը նշանակվել է Կ. Պոլսի դեսպան։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Պատրիարքական խնդիր

Կ. Պոլիս, 27 յուլիս

Արշարունի սրբազանի հրաժարականը շատ խաղաղ պայմաններու մէջ կատարուեցաւ։

Ամեն կողմէ կը սպասուէր, որ նոյնքան խաղաղ կերպով, առանց կուսակցական նկատումներու և մոլեռանդութեան կատարուի նաև պատրիարքական ընտրութիւնը, որուն համար, ինչպէս ըսած էինք, համաձայնութիւն գոյացած էր՝ յանձին Դիարբէքիրի առաջնորդ Զաւէն եպիսկոպոսի։

Դաշնակցականները նոյնիսկ իրենց համաձայնութիւնը յայտնելէ յետոյ Զաւէն եպիսկոպոսի ընտրութեան համար հիմա կուզեն դրժել իրենց խոստումը՝ պատրուակ մը փնտռելով կամ ստեղծելով։

Իրենց դրժումը մեղմացնելու համար Արշարունի սրբազանի հրաժարականը անգամ մը ընդունուելէն հազիւ երկու ժամ յետոյ, դրուժան ըլլալու ամբաստանութեան ենթարկեցին կեդրոնի խմբակցութիւնը, կրօնական ժողովի անդամ ընտրուած ըլլալուն համար Օրմանեան արքեպիսկոպոսը։

Դաշնակցականները կը հաւատէին, թէ կեդրոնը խոստացած էր կրօնական ժողովի անդամ չընտրել զՕրմանեան սրբազան։ Պահ մը միամտաբար հաւատացի արդարև, որ կրնար այս տեսակ խոստում մը տրուած ըլլալ։ Սակայն յետոյ հետամուտ եղանք հասկնալու համար որ իրապէս կա՞ր այս տեսակ համաձայնութիւն մը։ Մեր ստացած պատասխանը շատ որոշ է։ Կեդրոնի ներկայացուցիչները բնաւ այս տեսակ խոստում մը չեն տուած դաշնակցականաց։ Միայն թէ Արշարունի սրբազանի հրաժարականին համար կատարուած խորհրդակցութեանց պահուն անցողակի կերպով այս տեսակ առաջարկ մը եղած էր և կեդրոնի ներկայացուցիչներէն մէկը անձնապէս իր համամտութիւնը յայտնած էր, սակայն յատուկ պայման նշանակուելուն հակառակած էր «չափազանց մեծ պատիւ մը չընելու համար Օրմանեանին»՝ իր բառերով խօսելով։

Հետևաբար Օրմանեանի մասին ոևէ համաձայնութիւն գոյութիւն չունէր և շատեր ինքնաբերաբար տուած էին իրենց քուէն։

Այս ընտրութիւնը պատրուակ մը ըրին ուզեցին եղծանելու համար գոյացած համաձայնութիւնը... քանի որ դրժած էր կեդրոնը (?!!)։

Հետևաբար սկսան տարբեր թելեր նուագել դարձեալ։

Սակայն Օրմանեան սրբազան իր հրաժարականովը դաշնակցականաց այս խաղը եղծանեց։

Զգալով որ դաշնակցականները ինչ կը խորհին—քանի որ Շահրիկեան արդէն ժողովի մէջ իսկ արտայայտած էր—անմիջապէս հետևեալ օրն իսկ փութացուց իր հրաժարականը, որուն պատճէնն արդէն բաւական պերճախօս է։

Ահաւասիկ անոր օրինակը.

«Ազգային ժողովոյ երէկի նիստին մէջ կրօնական ժողովոյ ընտրեալներուն կարգին իմ անունս ալ յիշուեցաւ, ուստի կը փութամ յայտնել, թէ պիտի չկարենամ այդ պաշտօնը ստանձնել։

«Առաջին և գլխաւոր պատճառն է՝ արդէն ձեռնարկած պատմական աշխատութիւնս, որուն պիտի չկարենամ հետևիլ, եթէ խօճի մօտք ժողովական պաշտօնով զբաղիմ, մինչ կարեւոր կը դատեմ և քաջալերութիւններ կը ստանամ սոյն գրական աշխատութիւնս լրացնել։

«Անկեղծ ըլլալու համար անցողաբար աւելցնեմ, թէ կրօնական ժողովի աշխատութիւնները կրօնական գործերով չեն պարփակուիր, այլ խառն ժողովի մասնակցութեամբ և վարչական ուղղութեան գործակցութեամբ քաղաքական ժողովի հետ ալ կը գտնուին։ Արդ, գաղտնիք մը չէ, որ պաշտօնի վրայ եղող քաղաքական ժողովը, ազնիւ անդամոց ոմանց բացառութեամբ, անհամակրութիւն մը կը զգայ ինձ հանդէպ։ Այդ պարագան կը թելադրէ նախահոգ զգուշաւորութիւն ունենալ, քանի որ իմ ալ հաստատուն սկզբունքն է, որ վարչական ժողովները կազմողներ պէտք է սրտիւ և սերտիւ կապակցեալ ըլլան։ Հետևապէս թէ անձնական պատճառներ և թէ պաշտօնէից պահանջներ չեն ներեր ինձ կրօնական ժողովոյ անդամակցութիւնը ստանձնել, և կը փութամ շուտով յայտարարել, որպէսզի այժմէն պէտք եղած կարգադրութիւնները տնօրինէք, գործոց ընթացքին յապաղումներ չպատճառելու համար։

«Հաճեցէք, տէր ատենապետ, ընդունիլ մեծարանացս հաւաստիքը»։

Հիմա որ Օրմանեան սրբազանի հրաժարականը կը բառնար ամեն արգելք եղծանելու գոյացած համաձայնութիւն մը, հիմա սկսած են անուղղակի կերպով պայքար բանալ Զաւէն եպիսկոպոսի անձին դէմ։

Անստորագիր գրութիւններ կը ցրուեն ամեն կողմ, Զաւէն եպիսկոպոսը արատաւորելու ձեռնարկներ կընեն և ամեն տեսակ խարդախութեանց կը դիմեն։

Արշարունի սրբազանի հրաժարականը տակաւին երէկ կատարուած իրողութիւն մը եղաւ, վասնզի երէկ էր, որ Բ. Դուռը իր հրաժարականին ընդունելութիւնը ծանույց պատրիարքարանի և խառն ժողովը հազիւ քուէներու մեծամասնութեամբ կրցաւ ընտրել պատրիարքական տեղապահը, և նոյն օրն իսկ կարծիքներու մեծ յեղաշրջում մը տեսնուեցաւ դաշնակցականաց և անոնց արբանեակներուն միջև։

Երէկ կէս օրէն յետոյ գումարուած խմբակցութեանց ներկայացուցիչներուն խորհրդակցական ժողովին մէջ նախորդ համաձայնութիւնը չեղեալ համարելու համար աշխատութիւն դրուեցաւ և կազմուեցաւ նոր ցանկ մը, կազմուած Զաւէն, Սմբատ և Թորգոմ եպիսկոպոսներէն, որոնց վրայ պէտք է իւրաքանչիւր խմբակցութիւն բերէ իր որոշ և հաստատ կարծիքը։

Ինչպէս կերևայ, նախորդ համաձայնութիւնը խանգարելու համար, դաշնակցականները սքանչելապէս կը շահագործեն իրենց որդեգրած ազատական խմբակցութիւնը, որ հիմա կուգայ յայտարարել, թէ իրենց խմբակցութիւնը չէ որոշած իր ընտրելին և կուզէ որ իր ձայնն ալ լսելի ըլլայ:

Այս նոր համաձայնութիւն մը ստեղծելու ջանադրութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ նոր անկարգութեան մը համար նոր դուռ մը բանալ, յուսալով թէ այդ դուռէն ներս կրնան անցնիլ «առաւելագոյն պահանջ» Դուրեան մը, եթէ ան չյաջողի՝ հանդուանտիպ Թորգոմ մը, կամ նուազագոյն պահանջ՝ Սմբատ եպ. մը:

Հետևաբար առանց տագնապի տապալած դատարկ աթոռին շուրջը. պատրիարքական տագնապ մը առաջ գալու հաւանականութիւնը առաջ կուգայ: Այն պարագային, որ Դուրեանի խօսքը հրապարակ գայ, Օրմանեան սրբազանի ընտրութիւնը շատ հաւանական կը դառնայ:

Ազգին մէջ նոր վէճեր և հակառակութիւններ առաջ չբերելու համար՝ Օրմանեան սրբազանի ընտրութիւնը պաշտպանելու տեէ տրամադրութիւն չկար կեդրոնին մէջ, միայն անոր համար որ ազգային ճակատագրին շուրջ համերաշխութիւն մը առաջ բերելու համար ամեն կուսակցութիւններու մէջ ստեղծուած համագործակցութիւնը կերքերով և վէճերով չխանգարուի:

Եթէ ոչ՝ շատերու համոզումն է, որ արդի ժամանակներու համար միակ յարմարագոյն մարդն է Օրմանեան արքեպ., որ կրնայ մեծապէս օգտակար ըլլալ:

Եթէ դաշնակցականները չուզեն Զաւէն եպիսկոպոսի անձի վրայ համաձայնիլ, ես կը ճանչնամ 30—35 երեսփոխաններ, որոնք որոշած են քուէարկել ուղղակի ի նպաստ Օրմանեանին:

Ասիկա ազգին համար նպաստաւոր բան մը չըլլար, վասնզի ներքին վէճերու և կերքերու արծարծման տեղի կրնայ տալ այս պարագաներու մէջ, սակայն ասոր պատասխանատուն անոնք չպիտի ըլլան, որոնք Օրմանեանի քուէ պիտի տան, այլ անոնք՝ որ գոյացած ընդհ. համերաշխութիւն մը պիտի եղծանեն:

Շառայլ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմիա, 19 յուլիսի

Դպրոցական գործը Ուրմիայի գաւառում կանգնած է խիստ յետամնաց աստիճանի վրա, այնպէս որ՝ կարելի է ասել, որ վերջին տարիներում նոյնիսկ գոյութիւն չէ ունեցել: Ատրպատականի հայութեան այս փոքրաթիւ հատուածը բաժանված և կտրտված լինելով մեծամասնութիւնից, չունենալով իրար հետ յարաբերական կապեր, կրթական գործը բոլորովին անուշադրութեան է մատնված. իսկ Ուրմիայի հայ ժողովրդի մեծամասնութիւնը բնակված լինելով շրջանիս մէջ գտնվող գիւղերում խառն—ասորիների հետ միասին—կորցրած լինելով իր ազգային բնորոշ առանձնայատկութիւնները՝ մի տեսակ այլասերված է և կրթական բարձր գործի մասին որևէ գաղափար չունի. դրա վրա աւելացրէք նաև եւրոպական միսիոներական հաստատութիւնների ներկայութիւնը (բողոքական, կաթոլիկ, եպիսկոպոսական, ռուս և այլն), որոնք աւելի մեծ զարկ են տալիս տիրող թմրութեան, առանց ունենալու իրական, կրթական արդիւնք:

Տարիներ առաջ Տիգրան Աֆրիկեանի հաշւով գաւառումս պահվում էին մի քանի դպրոցներ զանազան հայաբնակ գիւղերում. բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ այդ՝ մի քանի տարիներ միայն տեւելուց յետոյ, ինչ-ինչ պատճառներից դրդված, յարգելի բարերարը դադարեցրեց իր օգնութիւնը բոլորովին՝ վտանգի ենթարկելով շրջանումս կրթական գործը. այնուհետև թէև զանազան եկւոր անձնաւորութիւնների ջանքերով վերջին տարիները թէ գիւղերից մի քանիսում և թէ քաղաքում բացվել են դպրոցներ, բայց այն էլ շատ անկայուն, անհիմն և դպրոց կոչվելուց շատ հեռու, այնպէս որ մի տարի բաց է եղել, միւս տարի՝ ոչ. ուսումնական տարեշրջանը սկսվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներում, վերջացել մարտ-ապրիլ ամիսներում. իսկ անցեալ 1912—13 թ. ամբողջ գաւառում և քաղաքում ոչ մի դպրոց գոյութիւն չունէր:

Ահա այսպիսի մի անմխիթար վիճակի մէջ անցեալ յունիսին քաղաքիս հայ հասարակութեան մի քանի գիտակից և նախանձախնդիր անհատների ձեռներէցութեամբ վերջապէս կազմվեց ծխ. ժողով, ուր և ընտրվեց վստահելի մի հոգաբարձութիւն, որը իրան նպատակ է դրել Ուրմիայի հայոց դպրոցական գործը ըստ հնարաւորութեան դնել փոքր ի շատէ կանոնաւոր և տեական հիմքերի վրա:

Ց. Շ.

ԱՒԳՈՒՍՏ ԲԷԲԷԼ*)

II**)

Անցնելով Բէբէլի գլխաւոր հայեացքների և գործունէութեան նկարագրութեան, կարելի կը լինի բնորոշել նրանց, եթէ ասենք, որ նա անպայման հետևողական մարքսիստ էր, որ պատմութեան հիմք ընդունում էր դասակարգային կռիւը և ամենաուղղափառ սօցիալ դեմօկրատ էր, հետևաբար քաղաքական պահանջների շրջանակում ընդհանուր ձայնատւութեան անպայման կողմնակից էր և սաստիկ օպտիմիստ: Իր լաւատեսութիւնը հասնում էր այն աստիճանի, որ 1891 թ. կուսակցական համագումարի մէջ նա հաւատացնում էր, թէ «սօցիալ-դեմօկրատիական ծայրայեղ նպատակների լիակատար իրականացումը այնքան մօտ է, որ համագումարի անդամների մեծ մասը ականատես կը լինի այդ իրականացման»: Նա հաւատացած էր, որ դեռ 19-րդ դարում տեղի կունենայ «մեծ կլադդերադատչը»: Սակայն երբ անցաւ 19-րդ դարը և նրան յաջորդեց 20-րդը, նա ստիպվեց մի քիչ հեռացնել սօցիալ-դեմօկրատիզմի ծայրայեղ նպատակների իրականացման ժամանակամիջոցը, ասելով րէյխստագի մէջ «2000-րդ թւին, երբ արդէն իշխանութիւնը մեր ձեռքում կը լինի»: Բայց շուտով դարձեալ նա մօտեցրեց այդ ժամանակամիջոցը, երբ 1903 թ. ընտրութիւններին սօց.-դեմօկրատները յաղթանակեցին, և սկսեց խօսել լիակատար յաղթանակի մօտաւորութեան մասին:

Երբ Բրեսլավլի կուսակց. կոնգրեսում (1893 թ.) քննվում էր ագրարային ծրագիրը, Բէբէլը անակնկալ կերպով հանդիսացաւ այդ ծրագրի անպայման կուսակից և հանդէս եկաւ Զինգէրի և Կաուցկիի դէմ: Իսկ երբ կուսակցութեան մէջ ծագեց այսպէս կոչված «Բերնշտէյնականութիւնը» (1898 թ.), Բէբէլը միացաւ Լիբկնէխտի, Զինգէրի և Կաուցկիի հետ և օրթոդոքսալ սօցիալ-դեմօկրատիզմի մաքրութեան պաշտպան հանդիսացաւ և կուսակցութեան ամեն մի ժողովի մէջ կռիւ մղեց բերնշտէյնականների հետ: Միևնոյն ժամանակ, սկսած 1898 թւից, նա Բերնշտէյնի հետ դուրս եկաւ Զինգէրի և Լիբկնէխտի դէմ մի այլ հարցում:

Իբրև թէօրէտիկ, Բէբէլը առանձին նշանակութիւն չունի. Նա աչքի չէր ընկնում օրիգինալութեամբ և աւելի Կաուցկիի ետևից էր գնում: Բայց իբրև ատենաբան՝ Բէբէլը իր հաւասարը չունէր գերմանական րէյխստագում: Նրա բուռն, կրքոտ ճարտասանութիւնը գրաւում և հմայում էր ունկնդիրներին, որոնք ամբողջ 4—6 ժամ անընդհատ, առանց ձանձրանալու և յոգնելու հաճութեամբ լսում էին նրան: Մամուլի մէջ Բէբէլի ճառերը աւելի թոյլ տպաւորութիւն են գործում:

Իբրև գրող՝ նա բազմաբեղուն էր: Նրա գրուածքների մէջ նշանաւորներն են. 1) «Կինը և սօցիալիզմը» գիրքը, որի մէջ նա հանդիսանում է ծայրայեղ և վճռական ֆեմինիստ. Նրա համար կինը, իր հոգեկան յատկութիւններով, հաւասար է տղամարդուն, եթէ բարձր չէ, բայց ճնշված՝ եկեղեցու բուրժուական ամուսնութեամբ, պոռնկութեամբ և բուրժուազական պետութեան այլ համանման ինստիտուտներով (Բէբէլը այդպէս է բնորոշում նրանց), կինը գտնվում է ստրկութեան մէջ, որ թոյլ չէ տալիս նրա հոգևոր ուժերին զարգանալ: Բուրժուազական հասարակութեան մէջ կինը, Բէբէլի ասելով, չէ կարող զարգանալ և դատապարտված է ստրկութեան, միայն սօցիալիզմը կարող է բերել նրա համար փրկութիւն: 2) «Անտիսեմիտիզմ և պրօլէտարիատ»: 3) «Մեր նպատակները»: 4) «Ակադեմիկոսները և սօցիալիզմը»: 5) «Բերնշտէյնի մասին»: 6) «Պրօֆեսիօնալ շարժումը և քաղաքական կուսակցութիւնները»:

Բոլոր այս աշխատութիւնները թարգմանված են եւրոպական զանազան լեզուներով: Կան և մի քանի այլ աշխատութիւններ:

Մենք համառօտ գծերով նկարագրեցինք այն խոշոր դէմքը, որ այսօր գերեզման է իջնում, և, ինչպէս ասացինք, նրա մահով աշխատաւոր և բանւոր շարքերը և սօցիալ-դեմօկրատական մեծ կուսակցութիւնը կորցրին անպայման մի մեծ և արի պաշտպան ու գործիչ, որին դժւար թէ փոխարինող լինի:

Հ. Ա.

---

*) Տես «Մշակ» № 168.

**) Ներկայ յօդուածը թարգմանաբար առնում ենք „Политич. Энциклопедія“-ից Томъ I.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

«Մշակի» № 168-ի մէջ տպված այն լուրը, թէ Էջմիածնի սինօդի անդամ Բագրէն վարդապետը գնում է Շուշի, մասնակցելու յոբելեանին իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ, ինչպէս մեզ հաղորդում են ձեռնհաս աղբիւրից, սխալ է: Բագրէն վարդապետը գնում է Շուշի մասնակցելու անձնական հանգամանքով, ի հետևումն խնդրանաց մի խումբ ղարաբաղցիների և իբրև նախկին սան դպրոցի: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որին յոբելեանական յանձնաժողովը խնդրել էր պատւել իր ներկայութեամբ հանդէսը, չը կարողանալով այս միջոցին հեռանալ Էջմիածնից, ուղարկել է հայրապետական օրհնութեան կոնդակ:

—

Խմբագրութիւնս ստացել է «Տարազի» յուլիս-օգոստոս (№ 7—8) համարը, որը ամբողջապէս նուիրված է «Ղարաբաղի յոբելեար թեմական դպրոցին»: Այդ համարում զետեղված են մի շարք լուսանկարներ՝ թեմական դպրոցի հին ու նոր շէնքերը, թեմական դպրոցը իր սաներով, դպրոցի կալուածը՝ Դուտխու Քալաչարը, դպրոցի անդրանիկ տեսուչներն ու ուսուցիչները իր սկզբնաւորութեան շրջանում, նրա միջոցներն ու ղեկավարները, դպրոցի ուսուցիչները, նրա տուած յայտնի աշակերտները, դպրոցի այժմեայ հոգաբարձութիւնն ու յոբելեանական կենտրոնական յանձնաժողովը:

Մի շարք յայտնի պատմական և նորագոյն դէմքեր իրանց լուսանկարներով զարդարում են այդ համարի էջերը: Արդի Վեհափառ Գէորգ V Կաթողիկոսը, Մատթէոս Ա. Կաթողիկոսը, Սարգիս արքեպիսկ. Հասան-Ջալալեանը, Արիստակէս արքեպիսկ. Սեդրակեանը, Գրիգոր եպ. Աղափիրեանը և այլն, նոյնպէս և բազմաթիւ հասարակական յայտնի աշխարհական դէմքեր թէ հանգուցեալ, թէ դեռ ևս կենդանի: Համարը բաւականին աչքի է ընկնում իր ճոխութեամբ ու մաքուր տիպով: Զետեղել են յօդուածներ՝ Տ., Տմբլաչի-Խանեան, Կարինէ, Մասեհեանի բանաստեղծութիւններից Կ. Կրասիլնիկեան, Խանզադեան, Կայծ և այլն:

ԵՒԼԱԽԻՑ ՇՈՒՇԻ

(Ղարաբաղի հայոց թեմ. դպրոցի յոբելեանի առիթով Շուշի ուղևորվողների ուշադրութեանը)

—

Շուշի, 29 յուլիսի

Չը նայելով որ 1910 թ. ես մի անգամ էլ «Մշակի» մէջ նկարագրել եմ մանրամասնօրէն Եւլախից Շուշի և յետ ճանապարհորդութեանս անկնարկները, սակայն ստիպված եմ այս անգամ այս օրերս կատարած ճանապարհորդութեանս մասին մի քանի կարևոր անկնարկներ անել՝ հրաւիրելով ընդհանրապէս ճանապարհորդների և մասնաւորապէս Ղարաբաղի հայոց թեմ. դպրոցի 75-ամեայ յոբելեանական պատգամաւորների ուշադրութիւնները:

Արագընթաց գնացքով ամսիս 27-ին, առաւօտեան ժամը 8-ին, Բագուից ճանապարհվեցի Եւլախ, ուր հասայ նոյն օրը ցերեկվայ ժամը 2½-ին:

Ճանապարհորդական իրերս ուղարկեցի պօստի կայարանը (տրակտ), իսկ 5 րոպէից յետոյ ինքս էլ գնացի:

— Շուշի պիտի գնամ, ինչպէս կը կարգադրէք,—հարցրի ես —գրասենեակում նստած կարգադրիչին:

— Ինչո՞վ:

— Ցանկալի էր կալեսկայով գնալ,—պատասխանեցի ես:

— Ութ ռուբլի պիտի վճարէք:

— Ինչո՞ւ, չէ՞ որ 5 ռուբլի է յայտարարված: Այստե՞ղ չէ պ. Վարազեանը:

— Ոչ, Ղալումն է (Շուշի): Երկու հոգի գնացողներ կան, եթէ դուք էլ գնաք, այն ժամանակ երեքիդ համար կարելի է կալեսկա տալ, իսկ երեքդ կը վճարէք չորս հոգու վճար, որպէսզի կալեսկի գինը կարելի լինի լրացնել:

— Շատ լաւ,—համաձայնվեցի ես, ի նկատի առնելով որ 4-րդ ընկեր չունէինք, իսկ ես անպայման ճանապարհվել կուզէի:

Վճարեցի, ստորագիրը ստացայ:

Երեկոյեան ժամը 5-ին կալեսկան կանգնեց պօստային տրակտի առաջ. մէջը կային մի քանի իրեր: Տեղաւորեցին և իմ մի կտոր իրս: Ես նստեցի առաջինը, նստեցին 2-րդ և 3-րդ ուղեկիցներս. սպասում էինք, որ լծեն ձիերը, սակայն մի քանի րոպէից յետոյ նստեց և մի չորրորդը. եղանք երկու հայ և երկու թուրք: Իմ հարցիս, թէ ինչո՞ւ իրանց խոստումը չը կատարեցին, կառավարիչ կոչվածը ու իր օգնականը յայտնեցին, որ նոր մարդ է, և խնդրեցին ընդունել, մանաւանդ որ ազատ տեղ կայ ու իրեր էլ չունի. խնդրեց և նորեկ չորրորդը, որը քիչ էլ տկար էր: Մենք զիջեցինք, մտածելով որ ազատ տեղ կայ ու չարժէ վիճել. բայց մտադրվեցի Շուշում այդ մասին յայտնել Վարազեանին:

Մեր այդ կարճ, բայց բողոքող ձևերով խօսելը դէմուդէմ պատշգամբից նկատելիս է լինում Եւլախի ոստիկանապետ Ալիևը, որը առանց պաշտօնական զգեստի կանգնած էր, որին չէի էլ ճանաչում և չը գիտէի, որ ոստիկանապետն է:

— Եթէ ճանապարհներին մարդիկ նստեցնեն, թոյլ չը տաք. չորս հոգուց աւելին իրաւունք ունէք թոյլ չը տալու,—բարձր ձայնով ասաց պատշգամբում կանգնածը:

— Աւելորդ է ձեր անհանգստութիւնը,—պատասխանեցի ես,—վերջին ժամանակներս մի քանի անգամ անցել եմ այստեղով և լաւ եմ տեսել. հին կարգադրիչները այլ ևս չը կան...

Անծանօթ խօսակիցս մտաւ ներս, մի քանի վայրկեանից յետոյ պաշտօնական վերնազգեստը հագած՝ դուրս եկաւ ու շարունակեց.

— Եթէ մինչև Բարդա կայարանը չորսից աւելի մարդ նստեցնեն, բաց նամակով յայտնեցէք ինձ, իսկ գինը՝ Բարդայի կամ Աղդամի պրիստաւին:

Տեսնելով ում հետ գործ ունեմ, մենք ծանօթացանք, յայտնելով մեր շնորհակալութիւնը:

Երեկոյեան ժամը 9-ին հասանք Բարդա: Որքան եղաւ զարմանքս, երբ փոխանակ պօստի տրակտում փոխելու մեր կալեսկայի ձիերը՝ ուղիղ քշեցին մի աղտոտ քարվանսարա: Իմ հարցիս ու զարմանքիս պատասխանեցին, որ պօստի տրակտը և մասնաւոր կալեսկաների, դիլիժանսների տէրերը ընկերութիւն են կազմել իրար մէջ՝ ճանապարհորդների վերաբերմամբ:

Ճանապարհորդներիս տոմսակները ժողովեցին, տուին երկու տոմսակ. մէկը ինձ՝ հայ ճանապարհորդի հետ միասին, միւսը՝ երկու թուրքերին:

Մինչ ճանապարհվելը հարց տուի, կարծելով որ Վարազեանը կարող է Բարդա լինել: Սակայն զարմացայ, երբ լսեցի, որ Վարազեանը հեռացել է գործից:

Ինչպէս կասեն, մատս կծեցի, բայց արդէն ուշ էր, և իմացայ, որ եթէ 25 վերստ առանց մարդիկ աւելացնելու մեզ բերել են հանգիստ կերպով, այդ էլ շնորհիւ ոստիկանապետի բարձրաձայն յայտարարութեան է եղել:

Ժամը 10-ին, մի ժամից յետոյ, ճանապարհվեցինք դէպի Կարբանդ կայարանը: Նոր էինք մի քանի քայլ արել, կառքը կանգնեց, բարձրացաւ մի նոր ընկեր մի քանի կապոցներով: Մեր բողոքը մնաց անհետևանք: Շարունակեցինք: Շիրվանլուի մօտ, մի քանի վերստ անց, պատահեցինք մի այլ մարդու, որը մի քանի իրեր առաջը դրած՝ կանգնեցրեց մեր կալեսկան, խօսեց կառապանի հետ ու սկսեց տեղաւորել իրերը: Նորից բողոքեցինք, բայց այս անգամ ոչ միայն մեր բողոքը անհետևանք մնաց, այլ և անպատասխան, արհամարհանքի արժանացաւ: Գիշեր է, ժամը 11-ը լրացել է արդէն. սուս ու փուս շարունակեցինք մեր ճանապարհը: Շուտով հասանք կայարան, բողոքեցինք կայարանապետին, բայց նա սպառնաց մեզ երկար սպասեցնել տալ: Մենք լռեցինք:

Լոյսը բացվելու ժամին, դեռ առ. ժամը 4 չէր լրացել, հասանք մեծ կայարան Աղդամը: Մեզ հետ կայարան մտաւ և մի այլ կառք, մէջը հինգ հոգի նստած թուրքեր:

Կայարանապետը քնած էր. երկու կառքերի իսկական ճանապարհորդներս որոշել էինք, որ բողոքենք, որովհետև միւս կառքի ճանապարհորդների գլխին էլ էին խա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԸ

—

Մի անգամ հրէից րաբբի Տարֆօնը մի մեծ գումար է տալիս իր բարեկամ Ակիբային և ասում.

— Թանկագին բարեկամս, առ այս փողը և դրանով գնիր մի հողամաս, որ ծերութեան հասակում, երբ մենք այլևս անզօր լինենք աշխատելու, մի կտոր արդար վաստակ տայ և ապահովէ մեզ:

Ակիբան առնում է փողը և ճանապարհ ընկնում: Ճանապարհին պատահելով կարօտեալների, տառապեալների ու աղքատների, բոլոր փողը բաժանում է նրանց ու ինքը երկար ժամանակից յետոյ, դատարկ ձեռքով, վերադառնում իր բարեկամի մօտ:

Տարֆօնը, երբ լսում է բարեկամի վերադարձը, շատ ուրախանում է և սկսում հարց ու փորձ անել ձեռք բերած հողի մասին.

— Հա, մե՞ծ կալուածք ես ձեռք բերել դու, շա՞տ պտղատու է հողը, արդիւնք շա՞տ կը բերէ:

— Օ... Այո,—պատասխանում է Ակիբան:—Ես ձեռք եմ բերել մի այնպիսի ահագին կալուածք, որ ամբողջ աշխարհում դժուար թէ նմանը գտնվի:

— Իսկ նրա համար հաստատման փաստաթուղթ ունե՞ս,—հարցնում է Տարֆօնը:

— Ինչպէս չէ, ինչպէս չէ,—պատասխանում է Ակիբան,—և ինչպիսի՜ հաստատման փաստաթուղթ: Նա ձեռագիր է, գրված Դաւիթ թագաւորի իսկական ձեռքով, որտեղ և ասված է. «Ով առատաձեռն է դէպի կարօտեալներն ու տառապեալները, աղքատներն ու չքաւորները, նա է ամենահարուստ մարդը»:

Տարֆօնը, լսելով այս խօսքերը, փաթաթվում է Ակիբայի պարանոցին, երկար համբուրում է նրան և ասում.

— Իմ թանկագին ուսուցիչ և դաստիարակ, ես այժմ միայն տեսնում եմ, որ դեռ քեզանից շատ բան ունեմ ընդօրինակելու և սովորելու:

Թարգմ. Ղևոնդ ք. Յովսէփեան

ԲԱՐԻ ԳՈՐԾՈՂԸ

(Օսկար Ուայլդից)

—

Գիշեր էր և նա մենակ նստած էր:

Եւ նա տեսաւ հեռւում քաղաքի պարիսպներն և ճանապարհվեց դէպի յիշեալ քաղաքը:

Երբ նա մօտեցաւ, քաղաքում լսեց նա ուրախալի ձայներ և ուրախացող շրթունքների ծիծաղ:

Նա բաղխեց քաղաքի դուռը, և դռնապաններից ոմանք բաց արին նրա համար:

Եւ նա տեսաւ մարմարիոնէ մի տուն և տան առաջ մարմար բարձր շքասիւներ: Շքասիւները զարդարված էին կիլլեանտաններով, իսկ ներսում ու դրսում վառվում էին մայրափայտից լապտերներ:

Եւ նա մտաւ ներս:

Եւ երբ նա անցաւ քաղկեդոնաքար ու յասպիսեայ դահլիճների միջով և եկաւ երկար հանդիսաւոր հացկերոյթի դահլիճը, նա տեսաւ ծիրանագոյն մահճի մէջ նստած մի մարդու, որի մազերը պսակված էին կարմրավառ վարդերով և որի շրթունքները գինուց կարմիր էին:

Եւ նա ետևից մօտեցաւ, հպվեց նրա թիկունքին ու ասաց.

— Ինչո՞ւ ես այդպէս ապրում:

Պատանին յետ դարձաւ ու ճանաչեց նրան և ի պատասխան ասաց.

— Բայց չէ՞ որ ես մի ժամանակ բորոտ էի և դու սրբեցիր ինձ: Ի՞նչպէս կարող եմ ուրիշ կերպ ապրել:

Եւ նա թողեց այս տունն ու կրկին փողոց դուրս եկաւ:

Շուտով նա տեսաւ մի կին, որի դէմքն ու զգեստները նկարազարդ էին և որի ոտքերը զարդարված էին մարգարիտներով:

Նրա ետևից, որպէս որսորդ, պատանին գաղտագողի գնաց երկգոյն վերնազգեստով:

Կնոջ դէմքը նման էր կուռքի գեղեցիկ դէմքին, իսկ պատանու աչքերը փայլում էին ցանկասիրութեամբ:

Եւ նա իսկոյն մտաւ նրանց ետևից ու հպվելով պատանու ձեռքին ասաց.

— Ինչո՞ւ ես նայում դու այդ կնոջը և այն էլ այդպիսի վատ հայեացքով:

Եւ պատանին յետ նայեց ու ճանաչելով նրան ասաց.

— Բայց չէ՞ որ մի ժամանակ ես կոյր էի և դու իմ աչքերը բաց արիր: Ուրիշ ինչի՞ վրա ես նայեմ:

Եւ նա հասաւ կնոջ ետևից, կպաւ նրա նկարազարդ զգեստին և ասաց.

— Բացի յանցանքի շաւղից ուրիշ շաւիղ միթէ չը կայ:

Կինը յետ դարձաւ և ճանաչեց նրան ու ծիծաղելով ասաց.

— Բայց չէ՞ որ դու իմ յանցանքներին թողութիւն տուիր, և այս շաւիղը ուրախութեան շաւիղ է:

Եւ նա դուրս եկաւ քաղաքից:

Երբ նա քաղաքի ետևի մասումն էր, նա տեսաւ մի պատանի, որը ճանապարհին նստել ու լալիս էր:

Եւ նա մօտեցաւ նրան ու մազերի երկար հիւսերին կպչելով ասաց.

— Ինչո՞ւ ես լալիս:

Պատանին աչքերը բարձրացրեց և ճանաչեց նրան ու պատասխանեց.

— Բայց չէ՞ որ ես երբեմն մեռած էի և դու յարութիւն տուիր ինձ: Բացի լալուց ինչ պիտի անեմ:

Ցար. Ցարութիւնեան

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՒՍՏՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Հարկաւոր չէր մարգարէ լինել գուշակելու համար այն բոլորը, ինչ կատարվեց Բալկանեան թերակղզում վերջին մի ամսվայ ընթացքում: Անսպասելի էր միայն իրերի այդքան արագ ընթացքը և Բօլգարիայի կրած այդքան ծանր կորուստներն ու տագնապալից ճգնաժամը: Ամիսներ շարունակ հոսող արիւնը չը կարողացաւ լուծել բալկանեան հարցը: Պատերազմի սկզբում չորս դաշնակիցների միաձայն մեծաբոռ դղորդ աղաղակները յանուն պանսլաւիզմի այսօր ոչ միայն յօդս ցնդեցին, այլ և դիմակազուրկ արին այդ ազգային բռնայական իլլիւզիաները, հրապարակ հանելով բալկանեան պատերազմի իսկական նպատակը և, բալկանեան հարցը վերջնականապէս լուծելու փոխարէն, նրան նոր և աւելի բարդ կերպարանք տուեցին:

Թէ որոնք էին այն տնտեսական և քաղաքական պատճառները, որ ծնունդ տուին այդ եղբայրասպան կռւին, որ նոյնքան կատաղի էր, նոյնքան արիւնահեղ, որքան բալկանեան պատերազմը, այդ հարցը մենք շօշափել ենք արդէն «Մշակի» էջերում դեռ Մակեդոնիայի պատերազմը չը սկսված: Այժմ կանգ կառնենք այն հարցի վրա, թէ ինչու Բօլգարիան այդպէս չարաչար տուժեց:

Ընդունել, որ Բօլգարիան, կուրացած իր ունեցած յաջողութիւններից և իմպերիալիստական յախուռն ձգտումներից, չէր նախատեսում այն ողբալի կացութիւնը, որի մէջ կարող էր ընկնել և որի մէջ ընկաւ, եթէ նա զուրկ լինէր որևէ դաշնակցից, այնպէս, ինչպէս եղաւ իրօք, դա քաղաքական անհաւատալի տղայամտութիւն և մեծ կարճատեսութիւն կը լինէր նրա կողմից: Արդարև, եթէ նա համաձայնվեց յունիսի 17—30-ի յանկարծական գաղտնի յարձակմամբ մարտի հրաւիրել իր երեք դաշնակիցներին, ապա դրա համար նա ունէր յոյսեր, որոնց ապահովութեան վրա նա չէր կասկածում դժբաղդաբար:

Թիւրքիայի նկատմամբ նա ենթադրում էր, որ նրա կրած մահացու հարուածը բաւական էր նրան անդամալուծելու և մի առ ժամանակ ռազմական որևէ ագրեսիվ քայլի միանգամայն անկարող դարձնելու համար: Բացի այդ, մեծ պետութիւններն արդէն Լօնդօնում որոշել էին Թիւրքիայի համար որոշ սահմանագիծ — Էնոս-Միդիան,—որից այն կողմն անցնելը բոլոր մեծ պետութիւնների դէմ ըմբոստանալ կը նշանակէր: Այսպիսով Բօլգարիան հարաւից իրան միանգամայն ապահով էր զգում:

Իր հիւսիսային հարևանին—Ռումինիային—նա Սիլիստրիան զիջելով՝ մի անգամ արդէն բաւարարութիւն էր տուել և նրա հետ բարեկամական յարաբերութիւնները պահելու համար նախօրօք կատարել էր հարկ եղած ձևականութիւնները: Սակայն այդքանը բաւական չէր լիովին ապահով զգալու հիւսիսից, մանաւանդ որ Բօլգարիային քաջ յայտնի էր, թէ Ռումինիան որքան վարժ է քաղաքական յարմար մոմենտներից օգտվելու արհեստի մէջ: Նա վստահ չէր նաև, որ իր յոգնած, վատացած բանակը կարող է մեն-մենակ ղացել այն օյինը, որը խաղացել էին մեր գլխին: Մինչ սպասում էինք կայարանապետի զարթնելուն, մէկ էլ տեսանք, որ, առանց մեզ, մեր իրերը կալեասկայից թափել են գետնին, ինչպէս և միւս կալեասկայի իրերը, և բոլորը միատեղ կապկպում են մի մեծ՝ կարետ կոչված կառքի վրա:

Սկսեցինք թոյլ չը տալ, բայց կարգադրիչի խրոխտ ձայնը գայրացրեց թուրք ճանապարհորդներից մէկին: Մենք դիմեցինք Աղդամի ոստիկանատուն, յայտնեցինք ու բողոքեցինք: Վերջապէս մի ոստիկան ուղարկեցին կայարան, որին բոլորովին չը պատասխանեցին էլ, կարծես մի ճանճ մտաւ կայարան, տզզաց կարգադրիչի ականջին ու հեռացաւ:

Ճիշդ է, մենք կարող էինք խմբական հեռագիր ուղարկել գաւառապետին և այլն, բայց հասկացանք, որ այդ Աղդամն է, յայտնի Աղդամը. իշխանութիւնը մեզ կը բաւարարեցնէր, բայց կառապանը ճանապարհին կառքը շուռ կը տար մի ձորանի մէջ ու կիսամարդ կը դարձնէր մեզ:

Ուստի ստիպված եղանք տասն եւ մէկ հոգի տեղաւորվել կարետ կոչված մի կառքի մէջ:

Թէ ինչ նեղութիւններ կրեցինք մինչև Շուշի հասնելը, այդ անկարելի է նկարագրել. բաւական է ասել, որ այնքան սեղմված էինք, այնքան կուչ եկած, որ ուրախանում էինք, երբ սար ճանապարհի էինք հանդիպում. ցած էինք գալիս ու ոտքով գնում, գնալով հանգստացնում էինք ջարդված ողնաշարներս, ազդրներս:

Ժամը $3^{1}/_{2}$-ին ճաշից յետոյ հասանք Շուշի:

Այսօր, նամակս գրելուց մի ժամ առաջ, պատահեցի Լ. Վարազեանին և պատմեցի կրած նեղութիւններս: Վարազեանը յայտնեց, որ ինքը հեռացել է այն պատճառով, որ կապալառուն խառնվելիս է եղել իր ներքին գործերին. դուրս արված խարդախ, կաշառակեր ծառայողներին հեռացնելուն դէմ է եղել և այլն. Վարազեանը և մենք շատ լաւ գիտենք, որ 15 ր. ստացող ծառայողը մի ընտանիք կերակրել չէ կարող, եթէ նա գողութիւններ չանէ ու կաշառներ չընդունի: Վարազեանը վերանորոգել էր ամեն ինչ և կարգի դրել. բայց նրա վերանորոգումները այնքան են խորթ թւացել կապալառուին, որ վերջինս սկսել է խառնվել Վարազեանի իրաւունքներին, բայց սա չընդունելով կապալառուի ոտնձգութիւնները՝ հրաժարվել է իր պաշտօնից:

Այդքանը բաւական է ծանօթացնելու ճանապարհորդներին ու յարգելի պատգամաւորներին, որպէս զի նրանք հէնց սկզբից հիմնաւոր հողի վրա դնեն իրանց ճանապարհորդութիւնը, և լաւ կանէին, եթէ Եւլախի ոստիկանապետ Ալիևի միջոցով գրաւոր երաշխաւորութիւն վերցնեն կայարանների կառավարիչներից, պայման դնելով որ ճանապարհներումն էլ (կայարաններում) ժամերով չը պահեն զանազան անհիմն պատճառներով:

Ս. Գարագաշ

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻ

XIII

Իրաւազուրկ յանձնաժողով

Բագու, 26 յուլիսի

Ահա մօտ մի տարի է, ինչ մեզ մօտ գոյութիւն ունի «Քաղաքային բարեկարգիչ յանձնաժողով» անունով մի հիմնարկութիւն իր ռայօնական ենթայանձնաժողովներով, որոնք ընտրված են ազգաբնակութեան կողմից և որոնց պարտականութիւնն է հսկել քաղաքի բարեկարգութեան վրա և միջոցներ ձեռք առնել քաղաքը բարեզարդելու համար:

Յանձնաժողովը ստեղծված է իբրև մի օժանդակ մարմին քաղ. ինքնավարութեանը, ու նրա բոլոր որոշումները պէտք է հաստատվեն ուպրավայից:

Ի պատիւ յանձնաժողովի պէտք է ասել, որ նրա անդամները, մանաւանդ կենտրոնական յանձնաժողովի անդամները, գործում են մեծ եռանդով և արդէն բազմաթիւ նպատակայարմար որոշումներ են կայացրել քաղաքի բարեկարգութեան վերաբերմամբ:

Ազգաբնակութիւնը մեծ ուշադրութեամբ է հետևում յանձնաժողովի աշխատանքներին և հաւատացած է, որ գուցէ նրա միջոցով միայն հնարաւորութիւն լինի քաղաքը բարեկարգ վիճակի մէջ դնել:

Եւ սակայն, չը նայած յանձնաժողովի եռանդուն գործունէութեանը, չը նայած նրա կայացրած բազմաթիւ նպատակայարմար որոշումներին, այս մի ամբողջ տարվայ ընթացքում քաղաքային վարչութիւնը սիստեմատիկաբար անուշադրութեան է մատնում այդ որոշումները, և նրանցից ոչ մէկը մինչև այժմ դեռ չէ հաստատված:

Քաղաքային վարչութիւնը իր ստեղծած յանձնաժողովի վրա կարծես թէ իբրև մի խաղալիքի վրա է նայում. մարդիկ թողած իրանց աշխատանքը, գործերը՝ ծառայում են օրերով, խօսում, ժամանակ կորցնում, որոշումներ կայացնում, իսկ որոշումները ուպրավան քննութեան չի ենթարկում ու չի՝ հաստատում միանգամայն անհասկանալի պատճառներով:

Եւ քաղաքը շարունակում է մնալ իր նախկին կիսախարխուլ դրութեան մէջ. փողոցները կեղտոտ ու փոշով ծածկված, ծայրամասերը աղտեղութիւնների ճահիճ, մի կողմը եւրոպական փառաւոր մայրաքաղաք, միւս կողմը՝ ասիական ամենայետ ընկած, խուլ գիւղ:

Ու «քաղաքային բարեկարգութեան յանձնաժողովը», շնորհիւ քաղաքային վարչութեան, միայն անունով գոյութիւն ունի:

Ի՞նչ արած, չէ՞ որ այդ էլ մի բան է, չէ՞ որ մենք կարող ենք ասել, որ ազգաբնակութեան կողմից ընտրված բարեկարգիչ մի յանձնաժողով ունենք, որը գործում է և որի գործունէութեան արդիւնքները կեանքի մէջ կը տեսնենք եթէ ոչ մենք, գոնէ մեր թոռներն ու ծոռները:

Տարիների, տասնեակ տարիների ընթացքում միշտ այդպէս են գնացել մեր քաղ. գործերը, և միանգամից, դիւթական գաւազանի մի հարուածով նրանց ուղղել չէ կարող ոչ մի յանձնաժողով, որքան էլ նա աշխատանքի ընդունակ լինի, որքան էլ նա տարված լինի քաղաքը բարեկարգելու, ազգաբնակութեան շահերի պաշտպանութեան իդէայով:

Եւ զուր են յանձնաժողովի անդամները նեղանում ու բողոքում, որ իրանց որոշումները մնում են անկատար. տարիների ընթացքում Բագւում ապրելով ու գործելով՝ նրանք շատ լաւ պէտք է իմացած լինեն մինչև այժմ, թէ ինչի՞ են ընդունակ մեր ուպրավան ու քաղաքային վարչութիւնը:

Վաղարշակ Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ռուսաց սինօդը առաջարկել է վրաց էկզարխութեան թեմական առաջնորդներին աջակցութիւն ցոյց տալ լէյբ-գվարդիայի հուսարների գնդի գեներալ-մայոր Վօյկօվին, որի վրա բարձրագոյն պարտականութիւն է դրված ընդհանուր հսկողութիւն ունենալու ընդհանրապէս մատաղ սերնդի ֆիզիքական զարգացման գործի վրա և մասնաւորապէս մարմնամարզութեան և զինւորական վարժութիւնների վրա՝ բոլոր տեսչութիւնների իրաւասութեան ներքոյ գտնվող տղայոց ուսումնարաններում:

◆ Ա. Ս. Մանթաշեանի անունով կառուցված քաղաքային դպրոցի շէնքը Գուդովիչի փողոցի վրա և իշխ. Վ. Ն. Ջերբեզովինը՝ Անդրէեվսկայա փողոցի վրա կօծվեն, առաջինը՝ սեպտեմբերի 15-ին, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի 1-ին:

◆ Նորերս վախճանված քաղաքային կենտրոնական բուժարանի կին բժիշկ Մ. Ա. Իսակեանի տեղ քաղաքային վարչութիւնը նշանակել է Կուկիայի քաղաք. բուժարանի բաժանմունքի կին-բժ. Լ. Մուխարինսկայային, սրա տեղ քաղ. ծննդաբերական ապաստարանի հերթապահ բժ. Օ. Շէնգերին, Շէնգերի տեղը՝ պահեստի բժ. Մկրտումեանին և վերջինիս տեղ՝ կին բժիշկ Օ. Վ. Տէր-Դանիէլովային:

◆ Օգոստոսի 1-ին վախճանված պետական խորհրդական Մեսրովբ Տէր-Գրիգորեան Զարդեղեանցի այրին՝ Փիփրոնիա Տէր-Պետրոսեան Զարդեղեանցը ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու նուիրել է զանազան հաստատութիւնների 3,100 րուբլի, որից՝ 2000 ր. Կ. Հ. Բ. Ընկերութեանը, 200 ր. դպրոցական ֆոնդին, 100 ր. Որբախնամ Ընկերութեանը, 100 ր. կոյրերի դպրոցին, 100 ր. «Մեղու» ընկերութեանը, 100 ր. ձրի ճաշարանին, 100 ր. ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցուն, 50 ր. «Հասկերի» ընկերութեանը, 50 ր. քաղաքային դպրոցների ուժասպառ վարժուհիների նորակառոյց ապաստարանին, 200 ր. մի հիւանդի բժշկութեան համար, 100 ր. մի ուսանողի ճանապարհածախսի համար:

◆ Թիֆլիսի էժանագին բնակարանատէրերի ու բնակարան վարձողների ընկերութեան խորհուրդը դիմումն է արել Մոսկվայում ապրող Լ. Կ. Զուբալովին, խնդրելով արտօնեալ պայմաններով զիջել ընկերութեանը 250 քառ. սաժէն տարածութիւն Վակէի իր հողաբաժնից, որը կից լինելով ընկերութեան ձեռք բերած մի դեսեատին հողաբաժնին, շատ անհրաժեշտ է վերջինիս կանոնաւորութեան համար:

◆ Կայսերական Կովկասեան Գիւղատնտ. Ընկերութիւնը «Փրիդոնեան և Ընկ.» առևտրական տան միջոցով արտասահմանից բերել է տուել կարկտացիր րակէտներ՝ վաճառելու համար:

◆ Անդրկովկասեան անասնաբուժական ընկերութեան վարչութիւնը մօտ օրերս բանում է Նիկոլայեվսկայա փողոցի վրա անասնաբուժարան. բնակարանը, արդէն վարձված է: Մտադրութիւն կայ բուժարանի օգտին վերցնել խորհրդի համար՝ ամեն մի անասունին՝ 40 կոպէկ, ամեն մի թռչունին՝ 25 կոպ., օպերացիայի կամ հետազօտութեան համար՝ ըստ համաձայնութեան: Բուժարանի կառավարիչ է նշանակված ընկերութեան գանձապահ Կ. Ատրենը, բայց նրանից բուժարանին ծառայելու են ձրիաբար ընկերութեան անդամներ Վ. Գրոմով և Վ. Բելիցկի:

◆ Այս տարվայ յունվար ամսի 30-ին Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ սենատոր Վատացիի, զօրահրամանատարների և գիւղատնտեսական ընկերութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ փորձի ենթարկվեց Իլիա Ալեքսէյեվիչ Ցաբաձէի հնարած առողջապահական խմոր հունցելու տաշտ-մեքենան և ընդհանուր հաւանութեան արժանացաւ: Ինչպէս տեղեկացանք, այդ մեքենան շինվում է Միքայէլեան փողոցի վրա գտնվող «Գաբանտրա» արհեստանոցում և պատրաստ կը լինի մինչև օգոստոսի 15-ը: Նա արտաքուստ ներկայացնում է փայտաշէն մի ֆուտլեար, որի ներսում կան մաղելու ու խմոր հունցելու փայտաշէն մասեր և այնպէս է յարմարեցված, որ մաղված ալիւրի մէջ ոչ մի կեղտի կտոր մնալ չի կարող, խմորն էլ այնքան լաւ է խառնվում ու հունցվում, որ ամրացած կտորներ չեն կարող մնալ նրանում: Անիւների մասը բոլորովին առանձնացված է և խմորի հետ ոչ մի առնչութիւն չունի. դրանումն էլ կայանում է նրա առողջապահական լինելը: Առաջին մեքենան արժենում է հնարողի վրա մօտ 100 րուբլի, որպիսի գումարը իբրև նպաստ ստացել է գիւղատնտեսական ընկերութիւնից: Յաջորդ մեքենաների շինելը աւելի էժան կը նստի և Ցաբաձէն հնարաւորութիւն կունենայ վաճառել 80-ական րուբլով: Առայժմ նրա շինել տուածը 5 պուդանոց է միայն, որը իսկապէս հարկաւոր կը գայ հացթուխերի մեծ մասին: Մեքենայի գործածութիւնը բաւականին կը պակասեցնի հացթուխների ծախքերը աշխատող մի քանի ձեռքերի փոխարինելով:

◆ Հայոց դրամատիկական խմբի դերասան Շահխաթունին հրաւիրվել է Մոսկվայի Կայսերական Փոքր թատրոնի վարչութեան կողմից իբրև դերասան-էկստերն ռոճիկով ծառայելու կայսերական թատրոնի խմբի մէջ և մի-երկու տարվայ ընթացքում կատարելագործվելուց յետոյ կայսերական թատրոնի դերասանի կոչում ստանալու համար:

◆ Օգոստոսի 9-ին Եւլախ է գնում մասնագէտներից բաղկացած յանձնաժողովը՝ Գանձակի նահանգում պետական գիւղատնտեսական փորձադաշտի համար հողաբաժին ընտրելու նպատակով:

◆ Թիֆլիսի 2-րդ կադետների կորպուսի շինութեան համար հողաբաժին ընտրելու նպատակով կազմված յատուկ յանձնաժողովին մասնակցելու է քաղաքային վարչութեան ներկայացուցիչը: Վարչութիւնը այդ նպատակի համար ընտրել է քաղաքային հողաչափ Հ. Ռ. Մելիք-[illegible]:

◆ Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսը, «Бирж. Вѣд.»-ի ստացած տեղեկութեամբ, օգոստոսի 1-ին գնացել է Տամբովեան նահանգի Նովօ-Տոմնիկովօ կալուածը, ուր ներկայումս գտնվում է Կովկասի փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը:

◆ Վրաց երաժիշտ Ն. Պ. Սուլխանովը Կախէթիայում ձայնագրել է 32 վրացական հին ժողովրդական երգեր: Նոյն նպատակով Սուլխանովը մօտ ժամանակներս գնում է Արևմտեան Վրաստան:

◆ Թիօնէթի գաւառի Նախալակօրի գիւղում հիմնվել է իւղեան ընկերութիւն:

◆ Փոխարքայի պաշտօնակատարի հաւանութեամբ, «Кавказъ» լրագրի խմբագրութիւնը Բագու է ուղարկում Նիկոլայ Իվանովիչ Լեբեդևին՝ գործադուլային շարժումը ուսումնասիրելու նպատակով:

◆ «Зак. Рѣчь» լրագրի խմբագիր Դ. Մ. Դումբաձէն Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ ենթարկվել է 300 ր. տուգանքի իր թերթի № 145-ում «Ջիաթուրի գործադուլը» յօդուածի համար: Տուգանքը վճարված է:

◆ Յօգուտ Կ. Պոլսից եկած տ. Մ. Յովհաննիսեանի, որի մասին գրված է «Մշակի» № 169-ի Ներքին լուրերի բաժնում, Գ. Գ.-ից ստացանք 1 րուբլի:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 27-ից Միքայէլեան հիւանդանոց բերված Լեւան Իոգոնիձէն, որ ընկել էր էլեկտրաքարշի վագոնի տակը, յուլիսի 31-ին վախճանվեց նոյն հիւանդանոցում:

◆ Ուղղափառների Կուկիայի գերեզմանատանը օգոստոսի 2-ին ուշաթափված դրութեան մէջ գտել են թունաւորման նշաններով Թիֆլիսեցի Եղենա Պետրովնա Պրոտոպոպովային, 19 տարեկան, որ ապրում էր Նիկոլայեվսկայա փողոցի վրա № 94 տանը իր ծնողների մօտ: Նրան տարել են Միքայէլեան հիւանդանոցը: Բժշկի ասելով ընդունելով նիշադրի սպիրտ թեթև կերպով թունաւորված է և գտնվում է [illegible] դրութեան մէջ: Թոյն ընդունելու պատճառը անյայտ է:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 յուլիսի *)

Հայ ընթերցող հասարակութեան մէջ այս կամ այն կերպ տարածվել է այն կարծիքը, թէ իբր «Կովկասի Լրաբեր» թերթիկը մարքսիստական ուղղութեան եթէ ոչ օրգանը, գոնէ նրա արտայայտիչն է հնարաւորութեան սահմաններում:

Նրանք, որոնք ծանօթ են մարքսիզմի տեսական և գործնական հայեացքների հետ, ի հարկէ միայն ժպիտով կընդունեն այդ շինծու կարծիքը: Բայց որովհետև հայ ընթերցողների անհամեմատ մեծամասնութիւնը ծանօթ չէ բանւորական իդէօլօգիայի սկզբունքների հետ, ուստի նա հալած իւղի տեղ կընդունի այդ լուրը և թիւրիմացութեան մէջ կը լինի: Այդ պատճառով՝ թոյլ տուէք «Մշակի» միջոցով յայտարարել [illegible]տութիւն ընթերցող հասարակութեան, մանաւանդ բանւոր ընթերցողներին, որ «Կովկասի Լրաբերը» ոչ մի առնչութիւն չունի հայ մարքսիստների հետ և որ նա իր սահմաններում նոյնիսկ հեռաւոր կերպով անգամ չի արտայայտում մարքսիստական ուղղութիւնը:

Մի խումբ մարքսիստներ

Ծանօթ խմբ.—Մեզ թւում է, որ նամակագիր պարոնները աւելի լաւ [illegible] կը լինէին, եթէ «Կովկասի Լրաբեր» կոչված թերթին տային նրա իսկական անունը: [illegible] խղճուկ թերթը փողոցային և դեղին մամուլի տիպիկ ներկայացուցիչ է. պաշտօնական ղեկավարը գրականութեան, մամուլի հետ ոչ մի կապ չունեցող մի [illegible] է, որը [illegible] գլխին է իր վատորակ և փտած ապրանքով, իսկ բուն ղեկավարները՝ մի քանի գրչի աւազակներ, որոնք քաջութիւն չունեն նոյնիսկ իրանց անուամբ հանդէս գալու, այլ գործում են խուլերորէն, պատի ետևից, հովացնելու մի քիչ իրանց [illegible] ված սրտերը այն անձանց կողմից, որոնք քաջ ճանաչելով նրանց՝ միշտ պոկում են նրանց դիմակները: Եւ նորութիւն չէ մեր մէջ, որ յաճախ գրչի աւազակներ և [illegible] կական յելուզակներ վեհ և արժանաւոր գաղափարների դիմակի ներքոյ շահագործում են միամիտ ամբոխը:

Ի՞նչ կապ կարող է լինել Մարքսի և Կար-Միրի, Մէ-Բիսի կամ մի [illegible] միջև: Կար-Միրի բարբաջանքները [illegible] լու և նրա զզուելի դիմակը պատռելու ամենալաւ եղանակը այն է, որ գործածեցին Գ. Ենգիբարեանը և Գ. Ջալխուշեանը: Առաջինը մի հատիկ խօսքով լռեցրեց քամելէօնին՝ «եթէ չեմ սխալվում [illegible] Կար-Միրը նա պէտք է լինի, որին [illegible] անգամ դատապարտեցի բանտարկութեան գողութեան համար», իսկ Գ. Ջալխուշեանը լռեցրեց այդ քամելէօնին գրական վէճի առիթով, ցոյց տալով որ նրա [illegible] բացաւը ոչ թէ գրական ֆոնդն է, այլ [illegible] կը խնձ, մէկը քեզ»: Այդպիսի յե[illegible] գրչակների և փողոցային թերթերի[illegible] նշանակութիւն տալ՝ կը նշանակէ [illegible] ւել ազնիւ և շիտակ մամուլը: Միայն [illegible] այդ յելուզակային խմբի անդամների [illegible] սևագործութիւնների հետ ևս կը [illegible] թացնենք շուտով, խմբի պատկերը [illegible] տար դարձնելու համար:

յաղթահարել իր նախկին երեք դաշնակիցների միացեալ բանակներին, որոնք, աւելի առաջ վերջացրած լինելով պատերազմական գործողութիւնները, համեմատաբար շատ աւելի հանգստացած ու կազդուրված վիճակի մէջ էին գտնվում:

Առանց այս երկու թոյլ կողմերին ապահովութիւն ու զօրավիգ գտնելու՝ Բուլղարիան ամենևին չէր համաձայնվի անհաշտ լինել դէպի իր դաշնակիցներն ու ոչինչ չը զիջել նրանց: Կար անշուշտ մի պետութիւն, որ շշնջում էր Բուլղարիայի ականջին, խրախուսում և զանազան խոստումներ անելով՝ մղում էր նրան զէնքի դիմել իր դաշնակիցների դէմ: Կար այդպիսի մի պետութիւն և դա Աւստրիան էր.-Դժբաղդաբար բուլղարական դիպլօմատիան անկարող եղաւ ըմբռնելու Աւստրիայի նենգամիտ քաղաքականութիւնը և թէ առած նրա մակերեւութային խոստումներից—թոյլ չը տալ Ռումինիային որևէ արգելք յարուցանելու Բուլղարիայի դէմ և սպառնալ Սերբիային ու Յունաստանին, եթէ սրանց սուրն աւելի կարող հանդիսանալու լինի—և խրախուսված կոմս Տիսզայի՝ Բուդապեշտից ուղարկած քաջալերանքներից՝ կատարեց յունիսի $^{17}/_{30}$-ի գաղտնի յարձակումը:

Տարված իր երկիրը ծաւալելու և Բալկանեան թերակղզում հեգեմօնիա ձեռք բերելու հրապուրիչ հեռանկարով, Բուլղարիան մոռացաւ, որ Ֆրանց-Ժոզէֆի կայսրութիւնը շարունակ հետամուտ է եղել խոչընդոտ հանդիսանալու, որ բալկանեան ժողովուրդները խաղաղ կեանքով ապրելու հնարաւորութիւն ունենան, որ նա շարունակ ձգտել է գրգռել նրանց միմեանց դէմ, քայքայել ու թոյլ չը տալ, որ նրանք զօրանան մինչև անգամ այն ժամանակ, երբ նրանք սեփական արեան գնով կարողացան ազատութիւն ձեռք բերել և անկախ պետութիւններ կազմել: Նա մոռացաւ, որ Աւստրիան էր բալկանեան դաշնակիցներին ակնյայտնի թշնամական վերաբերմունք ցոյց տուողը պատերազմի ամբողջ տևողութեան ընթացքում. նա էր, որ հանեց դաշնակիցների ձեռքից Ալբանիան, նա էր, որ դժուարութիւններ էր յարուցանում Լոնդոնում հաշտութիւն կնքելիս, և վերջապէս նա էր, որ վիժեցրեց ռուսաց Կայսրի հաշտարար միջամտութիւնը բալկանեան դաշնակիցների գժտութեան միջոցին:

Բուլղարիան պատերազմեց իր դաշնակիցների դէմ և երբ վերջիններս կարճ միջոցում մէկ-մէկ խլեցին Բուլղարիայից նրա քիչ առաջ վաստակած յաղթութիւնների բոլոր դափնեայ պսակները, և երբ Ռումինիան հիւսիսից և Թիւրքիան հարաւից ներս խուժեցին և միւսների հետ միասին սպառնացին լքված ու անօգնական Բուլղարիայի մայրաքաղաքը մտնել, Բուլղարիան մատնվեց ծայրայեղ տագնապի և նոր զգաց, որ սխալվել է իր հաշիւների մէջ ու չարաչար խաբվել Աւստրիայի կեղծ խոստումներից, բայց արդէն շատ ուշ. նրան մնում էր միայն «աւաղ փառացս անցաւորի» բացագանչել:

Աւստրիան ոչ Ռումինիայի մօբիլիզացիայի առաջն առաւ և ոչ որևէ սպառնալիք ուղղեց երեք դաշնակիցներին, որոնց սուրն աջ ու ձախ անսպասելի աջողութիւններ էր տեսնում:

Իսկ իւրաքանչիւր նման դէպքում իրանց հզօր ազդեցութիւնը գործ դնող մեծ պետութիւնները, կշտացած Թիւրքիայում ձեռք բերած իւղալի կօնցեսիաներից, անտարբեր ականատեսի դեր էին կատարում այն միջոցին, երբ սլաւօն ցեղերը վայրագօրէն իրար մորթոտում էին Բալկաններում, երբ Ռումինիան, առանց որևէ հիմունքի, տէր էր դառնում բուլղարական հողերին առանց մի կաթիլ արիւն թափելու, երբ Աւստրիան, կարծես մեն-մենակ ամբողջ Եւրոպայում, իր մեքենայութիւններն էր լարում Բալկաններում և երբ Թիւրքիան, օգտվելով Բուլղարիայի ծանր ճգնաժամից, իր շտապով վերակազմված բանակը շարժեց դէպի Թրակիա և առանց դիմադրութեան հանդիպելու վերստին գրաւեց նրան, արհամարհելով մեծ պետութիւնների՝ Լոնդոնում արած որոշումները: Ասիական Թիւրքիայում հարուստ կօնցեսիաների տէր դառնալուց յետոյ, ոչ մի նպատակ չը կար այլ ևս թշնամական դիրք բռնելու Լոնդոնի որոշումները կանգ առնող Թիւրքիայի դէմ, ուստի և եւրոպական դիպլօմատիայի պատմութեան մէջ արժանայիշատակ այդ ակտի առիթով դիւանագիտական շրջաններում անպաշտօն կերպով պտտվող լուրերը հետզհետէ թուլացան, Լոնդոնի որոշումները յարգել տալու համար ձեռք առնելիք միջոցները հետզհետէ գունատվեցին, կոլեկտիվ զինւորական ույժը փոխվեց կոլեկտիվ նաւային ցոյցի, ապա՝ կոլեկտիվ նօտայի, ապա իւրաքանչիւր մեծ պետութեան կողմից առանձին յիշեցման և ի վերջոյ՝ այսօրվայ տարօրինակ լռութեանը մինչ այն աստիճանի, որ դիպլօմատիական շատ շրջաններում եկել են այն եզրակացութեան, որ Թիւրքիան մեծ հաւանականութեամբ կը պահէ Թրակիան:

Եւ մինչդեռ Բուլղարիան շտապում է, խոշոր զիջումների գնով շուտափոյթ խաղաղութիւն կնքել, որպէս զի կարողանայ իր նախկին տերրիտօրիան ձեռքից չը հանել, Աւստրիան, որ Բուլղարիայի ամենածանր կրիզիսի օրերին ձեռքերը ծալած հրճվում էր բարձրացող Բուլղարիայի գահավիժումով, այսօր նա իր ներկայացուցչի միջոցով Բուխարեստում բարեկամական ժեստեր է ուղղում դէպի պարտվածը և միջոցներ է որոնում այժմ միայն չափաւորութեան հրաւիրելու Սերբիային և Յունաստանին, որովհետև հարկաւոր չէ, որ սրանք չափից աւելի զօրեղանան. այլապէս նրանք մշտական վտանգ կը դառնան, առաջինը՝ իր, իսկ երկրորդը իր զինակից Իտալիայի համար:

Շնորհիւ Աւստրիայի վարած այդօրինակ քաղաքականութեան՝ Ռուսաստանը յարմար չը դատեց օգտվել ներկայ քաղաքական խիստ յարմար մոմենտից մտնելու Փոքր-Ասիա և Անատոլիան գրաւելով՝ հիմնովին կերպարանափոխելու հայկական դժբաղդ հարցի դրութիւնը: Աւստրիայի հակազդեցութիւնն այդ թոյլ չէր տալիս: Բացի այդ, Թրակիայի վերստին գրաւումով Թիւրքիան ստիպված է իր կառավարական առանց այն էլ ապիկար ույժերի մի մասը Թրակիային յատկացնել և Փոքր-Ասիայի ու յատկապէս հայկական նահանգների բարենորոգումների հարցը աւելի ևս երեսի վրա թողնել: Ահա թէ անուղղակի կերպով ինչպիսի աննպաստ ազդեցութիւն կրեց հայկական հարցը շնորհիւ Մակեդոնիայի պատերազմի և Աւստրիայի քաղաքականութեան:

Վերջին ժամանակներս և մինչև այսօր ֆրանսիական և շվէյցարական մամուլը, ազատամիտ թէ պահպանողական անխտիր, չը լռված կծու լեզու և անվերջ կշտամբանքներ է թափում Աւստրիայի վրա, համարելով նրան բալկանեան ժողովուրդների ցեցը և հանուր Եւրոպայի հանգիստը վրդովող միակ պետութիւնը: Սակայն Աւստրիան այս բոլորի հանդէպ դըդվել անգամ չի ուզում և շարունակում է աւելի զօրեղ թափով առաջ մղել իր և իր զինակիցների էգօիստ շահերի թելադրանքները— խռովել շարունակ բալկանեան պետութիւններին, իրար դէմ լարել բալկանեան ժողովուրդներին և աստիճանաբար հիւծել ու քայքայել նրանց:

Իրերի ներկայ դրութիւնից լայն կերպով օգտվեց նաև Ռումինիան: Առանց մի կաթիլ արիւն թափելու, մի սոսկ մօբիլիզացիայով մի երկրորդ անգամ ի հաշիւ Բուլղարիայի նորանոր հողերի տէր դառնալուց և իր երկրի համար ամուր ստրատեժիկ սահմանագիծ ապահովելուց բացի՝ բալկանեան պետութիւնների հեգեմօնիան համարեա ձեռքն առաւ: Մակեդոնիայի պատերազմից օգտվելով և Բուլղարիայի թշնամիներից մէկը դառնալով հանդերձ՝ նա [illegible] դավարում Բուխարեստի կոնֆերանսն իր բաժինն ստանալուց յետոյ, նա [illegible] փաւորում յորդորներով երկու կողմերին առաջարկած պայմանները. և այս [illegible] յանուն բալկանեան հաւասարակշռութեան.

Եւ թէև Բուլղարիան բուռն կերպով [illegible] նում էր, որ Բուխարեստի կոնֆերանսի որոշումների վերջնական ռեվիզիան մեծ պետութիւնների ներկայացուցիչների յանձնըվի, բայց, ինչպէս երևում է [illegible] ընթացքից, մեծ պետութիւնները [illegible] ևս չեն ցանկանում անշահ գլխացաւութիւն ունենալ. գոնէ Աւստրիան և Գերմանիան [illegible] կանում են այդ պատիւը Ռումինիային թողնել, որովհետև սրան համարում են իրանց ապագայ զինակիցը:

Թէ ինչ կերպարանք կը ստանայ վերջոյ բալկանեան հարցը, այդ ապագան կորոշէ. յամենայն դէպս նա դեռ շատ հեռու է վերջնելու, մինչև որ մի օր Թերևս [illegible] նականապէս դադարի մեծ պետութիւնների ձեռքին խաղալիք լինելուց:

Ա. Չ.

---

*) Պատճէնը ուղարկված է «Կովկասի Լրաբեր» և «Հօրիզոն» թերթերին:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «Corriere della Sera» լրագրի մակեդոնական թղթակցի հաշւով առաջին բալկանեան պատերազմը պատճառել է թէ մարդկային և թէ նիւթական հետևեալ կորուստները. Բուլղարիան ունեցել է 80,000 սպանված և 1,200 միլիօն մարկ ծախք, Սերբիան՝ 30,000 սպանված և 620 միլ. մարկ ծախք, Յունաստանը՝ 10,000 սպանված և 280 միլ. մ. ծախք, Չերնօգորիան՝ 8000 սպանված և 16 միլ. մ. ծախք, Թիւրքիան՝ 100,000 մարդկային կորուստ և 1,600 մ. ծախք։ Երկրորդ պատերազմում Բուլղարիան կորցրել է 60,000 հոգի և 720 միլիօն մարկ, Սերբիան՝ 40,000 հոգի և 400 միլ. մարկ։ Եթէ դրան աւելացնենք խօլերայից և զանազան համաճարակներից մեռածներին, այն ժամանակ բալկանեան երկիրները կորցրել են այդ ժամանակամիջոցում 400,000 հոգի սպանված և 5,200,000,000 մարկ (չը հաշւելով Յունաստանի կորուստները երկրորդ պատերազմում)։

◆ Պետերբուրգի ֆինանսիստները դիմել են կառավարութեանը հարց տալով քաղաքական դրութեան մասին և պատասխան են ստացել, որ Ռուսաստանը դուրս կը քշէ Թիւրքերին Ադրիանուպօլսից այն ժամանակ, երբ կը ստանայ Եւրոպայի միահամուռ մանդատը այն երաշխաւորութեամբ, որ նա այդ դէպքում վնաս չի կրի։ Հակառակ դէպքում, խուսափելով բարդութիւններից, Ռուսաստանը ինքնուրոյնաբար քայլ չի անի։

◆ Լրագիրները հաղորդում են, որ եթէ բալկանեան դաշնակցութիւնը կամրապնդվի ռումինական և սերբիական գահաժառանգների ամուսնութեամբ ռուսական իշխանուհիների հետ և յունական թագաժառանգի ամուսնութեամբ ռումինական թագաւորի թոռան հետ։

◆ Աւստրիան ստիպված է յետ կանգնել Բուխարեստի դաշնագիրը վերաքննելու մտքից, մնալով միայնակ։ Ռուսաստանի հրաժարվելը՝ վերաքննելուց այստեղ շախմատային խաղ են համարում ընդդէմ Աւստրիայի։

◆ Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրքիան տեղեկացրել է, թէ համաձայն է խաղաղ եղանակով վճռել Ադրիանուպօլսի հարցը։ Նա առաջարկում է այդ մասին բանակցութիւններ վարել անմիջական կերպով։

◆ Պարիզի լաւատեղեակ շրջաններում խօսում են, որ Ֆրանսիան Ադրիանուպօլսի հարցում պաշտօնապէս կը պաշտպանի Ռուսաստանին։

◆ Պետերբուրգում գրաւվեցին բանւորական այն թերթերի համարները, որոնք յօդուածներ էին նուիրել Բեբէլի յիշատակին։ Ադմինիստրացիան արգելեց Բեբէլի մասին դասախօսութիւններ կարդալ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

2 օգոստոսի

ՖՈՐՏ-ՖՐԱՆՑԵՆԲՈՒՐԳ։ Կիրակի օր այստեղից բարձրացաւ մի աէրօստատ, որի մասին մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն չը կայ։ Կարծում են, որ աէրօստատը քամուց տարված է Ռուսաստան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օգոստոսի 1-ին Պետերբուրգի նահանգական դատարանի կարգադիր ատեանը որոշել է դադարեցնել «Живая Жизнь» և «Рабочая Правда» լրագիրները՝ մինչև նրանց դէմ յարուցված դատաստանական գործի վերջանալը։

Պետերբուրգի մամուլի վերաբերեալ կոմիտէտը արգելք է դրել «Сѣверная Правда»-ի № 2 և «Русск. Молва»-ի № 229-ի վրա «Պրովօկացիան նաւատորմում» և «Առանձին բաժին» յօդուածների պատճառով։

ՈՒՖԱ։ Ստացված տեղեկութիւնների համաձայն՝ նահանգում կարկտահար են եղել 25,750 դեսեատին զանազան հացաբոյսեր։ Վնասը անցնում է 2 միլիօնից։

ՊՕԼՏԱՎԱ։ Իլյինսկի տօնավաճառի վաճառականների յարուցած միջնորդութեան համաձայն՝ տօնավաճառը կը տևի մինչև օգոստոսի 15-ը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրական մինիստրի օգնական Բարկը ծառայութեան գործերով ուղևորվեց Սև և Ազօվեան ծովերի նաւահանգիստները դիտելու։

Հաստատված են չորրորդ կարգի մարդատար տարիֆի նոր կանոնները։ Գործածութեան են մացվում 4-րդ կարգի տոմսակները մեծ երեխաների համար այն հաշւով, որ երրորդ կարգի ընդհանուր տարիֆի 50%-ը վճարի ամբողջ տարածութեան համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կանայք Գերմանիայում իրաւունք ստացան համալսարան մտնելու 1908 թւին միայն։ 1108 ունկնդրուհիների թիւը այժմ հասել է 3436-ի անցեալ տարի նրանց թիւը 2058 էր. Նրանք ըստ իրանց ընտրած մասնագիտութեան ներկայացնում են. 1790 հոգի սովորում են փիլիսոփայական գիտութիւններ և պատմութիւն, 659՝ բնական պատմութիւն և մաթեմատիկա, 790-ը բժշկականութիւն, 100-ը տնտեսութիւն, 49-ը իրաւաբանութիւն, 96-ը ատամնաբուժութիւն, 12-ը աստուածաբանական գիտութիւն և մնացեալը դեղագործութիւն։

ՉԸ ՀԱՍՑՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կօբիից—Խրթարեանին, Օլթիից, Ղարագեօզեանին, Վլադիվօստօկից—Շագինեանին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Пиксафонъ
Уходъ за волосами дегтемъ
Цѣна флакона, хватающаго на нѣсколько мѣсяцевъ, 1 р. 50 коп.
На научномъ основаніи дѣйствительно лучшій способъ для укрѣпленія кожи головы и волосъ.
Пиксафонъ

(օգ. 4) (M. 262468) 2—2

Բաքւի «Մ. Ա. Ցօրդանեան» ազգային երկսեռ դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,

որ ունենայ ՑԵՆԶ և մի քանի տարվայ փորձառութիւն և որին, ի դէպս, կարելի լինի յանձնել նաև աւ.-ուսուցչի պաշտօնը։ Աւանդելի առարկան՝ Թւաբանութիւնն է, շաբաթական 24—25 դաս, ռոճիկը 6—700 ր., իսկ աւագ-ուսուցչութեան դէպքում յաւելեալ 50 ր., ճանապարհածախս՝ 25 րուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեան՝ պ. Հ. Առաքելեանին։

611. 3—2

23 տարվայ մանկավարժական հմտութեամբ

Ուսուցչուհի

ցանկանում է ունենալ դասեր ծխական դպրոցներում ռուսերէնից, թւաբանութիւնից (ռուսերէն լեզուով), պատմութիւն և ձեռագործ։

Դիմել՝ Одесса, Княжеская, 23, кв 8—Учительницѣ.

612. 3—2

Ոսկէ մեդալ Լօնդօն 1893 р.

Զգուշացէք կեղծիքներից!

ՊՐՕՎԻԶՕՐ

Г. Ф. Юргенсъ-ի

Բօրնօ-Տիմօլեան

Սապօն

Քրտինքի, այրուածքի, պէպէնների, ուգրիների, պզուկների և դեղին խալերի դէմ։

ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ
ՍԱՊՈՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ.

Վաճառվում է ամենուրեք։

1 կտորը 50 կոպէկ, 1/2 կտորը 30 կոպէկ։

(կ.) (M. 50331) 24—13

Գլխաւոր պահեստ՝ Москва, Г. Ф. Юргенсъ.

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ „ОДОБРИНЪ“

Только МИХАИЛА ЛЕБЕДЕВА

Съ надписью „Этикетъ утвержденъ правит.“.

Это средство уничтожаетъ совершенно въ нѣсколько дней застарѣлыя мозоли и бородавки съ корнемъ.

Денисовскій

Главный складъ: Кавказское Т-во Торговли Аптекар. Товарами—Тифлисъ, Баку, Батумъ

(կ.) 177. 0—20

ՇՈՒՇՈՒՄ

Մի հայ ընտանիքում

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ

ՆԱԽԼԷԲՆԻԿՆԵՐ

Գերադասութիւն կը տրվի ուսուցիչներին և ուսուցչուհիներին։

Հարցնել Շուշում՝ Ասրեանցի գրավաճառանոցում։

(կ.) 595. 3—2

ՈՒՐՄԻԱՅԻ (Պարսկաստան, Ատրպատականի նահանգ) հայոց դպրոցի համար հարկաւոր են 2 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և 1 ՎԱՐԺՈՒՀԻ։ Ուսուցիչներից մինը, որ ռուսերէն լեզուի համար է, պէտք է կամ գիմնազիաւարտ և կամ ուսուցչական ինստիտուտ աւարտած լինի. երկրորդը, որ հայոց լեզուի և միւս առարկաների համար է, պէտք է Թեմականաւարտ կամ Ճեմարանաւարտ լինի։ Վարժուհին պէտք է աւարտած լինի կամ գիմնազիան, կամ Յովնանեան և Գայիանեան դպրոցները։ Ցանկալի էր, որ ուսուցիչը և վարժուհին ամուսիններ կամ եղբայր և քոյր լինէին։ Ռոճիկը առաջինի համար 800 ր., երկրորդի և երրորդի համար 600-ական ր.։ Ճանապարհածախս 40 ր.։ Ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեանը՝ պ. Հ. Առաքելեանին մանրամասն պայմանները իմանալու համար։

610. 3—2

Արմեանսկի բազարում

Վարձով է տրվում մի տուն կրպակներով, ուր գտնվում է Սիօնի դեղատունը։ Պայմանները տեղեկանալ «Գրէգուար» վարսավիրանոցում։

(հ. կ.) 608. 3—1

Թիֆլիսի Մանթաշեան Առևտրական Դպրոցում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ նշանակված են օգոստոսի 19-ից, իսկ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ օգոստոսի 26-ից։ Քննութիւնների մանրամասն ցուցակը կարելի է տեսնել դպրոցի դիւանատանը։ Դպրոցին կից կայ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ բաժանմունք։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ժամը 1-ը ցերեկվայ։ Մաղթանքը և պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 2-ից։

(ու.կ.ե.) 601. 4—3

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Գ. ԵՒ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ

Նիկօլայեվսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Ընդունելութիւնը երեկոյեան ժամը 4—7-ը։

613. 50—2

ԱՌԵՒՏՐ. ՏՈՒՆ Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Ֆիրման գոյութիւն ունի 1869 թւից։ — Տելէֆօն № 2—38.

ՎԱՃԱՌՈՒՄ ԲԱՑԱՌԱՊԷՍ

ԲԱԶՄԱԶԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ (ОБОИ)

Ռուսական եւ արտասահմանեան առաջնակարգ ֆաբրիկաների։

Գինը—իւրաքանչիւր փաթեթը (րուլօ) 8 կ-ից սկսած։

Նմուշներն ուղարկվում են ձրի։

Վերանորոգութեան պատճառով, խանութի մուտքը բակից։

(օ.մ.) 589. 8—6

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԵՆԵԿԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ I-ԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ ԵՐԿՍԵՌ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(XIV տարի)

Դասընթացքներում աւանդվում են իտալական կրկնակի սիստեմով հաշւապահութիւն համապատասխան արդիւնաբերութեան զանազան ճիւղերին, առևտր. Թւաբանութիւն, առևտր. Թղթակցութիւն, առևտր. իրաւունք, սղագրութիւն և ցանկացողներին սովորեցնում են գրող մեքենայի վրա։

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 16-ից 1913 թ.։

Դասընթացքները տևելու են 6 ամսից ոչ պակաս։ Զբաղմունքները երեկոները՝ շաբաթական 3 անգամ։ Վճարը 40 ր. ամբողջ դասընթացքի համար։

Խնդրագրերը յանուն Թիֆլիսի Առևտրական Դպրոցի վերատեսչի ընդունվում են դպրոցի դիւանատանը առ. ժ. 10—1-ը։

(կ.ե.հ.) 614. 12—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ կիրառումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. Թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մայրենական և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտոնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտւութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Խնդրագրերի ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և Թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44

(կ. հ. ե.) 576. 0-6

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ „ՀԻՊՆՕՏԻԶՄ“ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։

Լոյս տեսաւ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԷՔԵՐՋԵԱՆԻ

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՂԱՔԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ» գիրքը։

Այս ձեռնարկով ամեն ոք կարող է սովորել հիպնօտիզմ, նրա պատմութիւնը և օրէնքը։ Հիպնօտիզմի փորձառական չկօլաների թէօրիաները և զանազանութիւնները։ Մարդկային մտքի երկւորեակ բնոյթը կամ գիտակցական և ենթագիտակցական մտքի ֆանկցիաները։ Ներշնչման եւ ինքնաներշնչման օրէնքները։ Իլլիւզիա կամ հալլիւսինացիա։ Կատալեպսի։ Յետ-հիպնօզական ներշնչումն։ Հիպնօզական սէանսներ և ինչպէս տալ։ Խորհրդի փոխանցումն կամ տելեպաթի։ Մտաւոր պայծառատեսութիւն՝ արթուն կամ քնած դրութեան մէջ։ Ինչպէս կառավարել երեխաներին ներշնչումով։

ՄԵՐ ՄՏՔԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԵՐԸ.—«Ես եմ»-ը մարդու մէջ կառավարելու ոյժը։ Անհատականութեան կարևորութիւնը։ Դրական մտաւոր գործունէութիւն։ Ինչպէս գործածել միտքը։ Ենթագիտակցութիւն։ Յարատև փափաքի ոյժը։ Կենտրոնացման ոյժը։ Կամքի ոյժը։ Ենթագիտակցական հնարաւորութիւնները։ Ներշնչման ոյժը։ Ինչպէս վարժեցնել ենթագիտակցութիւնը։ Ինչպէս գործածել ամբողջ միտքը։ Հաւատի ոյժը։ Ինչպէս կառուցանել մի զօրաւոր կամք։ Ինչպէս ձեռք բերել աջողութիւն կեանքում և այլն։

Գրքի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար դիմել նամակով հետևեալ հասցէով.—Ռուսաստանից. Арутюнъ Шекерджянъ, 22 Гановская, Тифлисъ. Արտասահմանից. Haroutun Shekergian, 22 Ganovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 385. 25—11

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Գեղեցկագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ

(ե. հ. կ.) 556. 0—11

Մեր պահեստի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուղարկում ենք ձրիաբար մի շատ սիրուն ալբոմ գեղարուեստ. 300 հատ բացիկներով կամ թէ վճարում ենք ալբոմի փոխարէն,

ՏԱՍՆԵՒՀԻՆԳ ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ

նրան, ով ուղիղ կերպով կը վճռէ ստորև բերված խնդիրը և կը պատուիրէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 85 կ., կամ թէ վերադիր վճարով՝ 95 կ.։

? ?

4		
	5	
		6

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թւանշանները պէտք է զետեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի, ըստ կարելւոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի 25 հատ բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, ստանում է պրէմիա, հետևաբար՝ դիմում անելուց պէտք է յայտնել, թէ որ պրէմիան է ցանկանում—ալբոմը թէ՞ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փոքրիկ կտորի վրա, ճշգրիտ հասցէն։

(Л. 12951) О-ВО «УНИВЕРСАЛЬ», ЛОДЗЬ С. 27. 10—3

ՇԱՐԺԻՉՆԵՐ ՌՈՒՍԱԿԱՆԸ „ԱՒԱՆՍ“

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ, ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ և ՆԱՒԱՅԻՆ

(Մշտական եւ շարժական)

1912 թւի պատէնտային նոր մօդէլը մինչև 300 ուժի։

Ուժի մէկ միութեան համար մէկ ժամում ծախսվում է 5/8 ֆ. նաւթ։

Ջրաղացների սարք ու կարգ։

Արժանացել է 60 մէդալի եւ ամենաբարձր պարգեւների։

Ռուսիայում գործածութեան մէջ են 4200 «ԱՒԱՆՍ»։

Նասօսների և էլեկտրական կայարանների ՍԱՐՔ ու ԿԱՐԳ։



ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ Է. Ա. ԷԴԵՆԲԵՐԳԻ ԲԱԳՎՈՒՄ։

կ. 522. 0—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный